# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼՈՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք,
Գ.ՖԻՈԼԵՏՈՎՈ, Հեռ. (0322)68941, fioletovovillage@mail.ru

N 58
*15 դեկտեմբեր 2014թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Ձեզ ենք ուղարկում Ֆիոլետովո համայնքի ավագանու թիվ,թիվ 32,33,34,35,36 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*Կապ.՝*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼՈՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovovillage@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 32

### ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով ՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

Ֆիոլետով համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 9-ի նիստի օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2014 թվականի 2-րդ եռամսյակում իրակացված վարչական հսկողության մասին
2. ՀՀ Լոռու Ֆիոլետովո գյուղական համայնքում 2015թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին
3. Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
4. Ֆիոլետովո համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԶԱԴՈՐԿԻՆ ՎԱԼԵՐԻ
2. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՏԱՏՅԱՆԱ
3. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՕԼԳԱ
4. ՆՈՎԻԿՈՎ ՎԱԼԵՐԻ
5. ՍԱՄՈԴՈՒՐՈՎ ՊԱՎԵԼ
6. ՑԻԿԻՆԱ ՎԱԼԵՆՏԻՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovovillage@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 33

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2014 թվականի 2-րդ եռամսյակում Ֆիոլետովո համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԶԱԴՈՐԿԻՆ ՎԱԼԵՐԻ
2. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՏԱՏՅԱՆԱ
3. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՕԼԳԱ
4. ՆՈՎԻԿՈՎ ՎԱԼԵՐԻ
5. ՍԱՄՈԴՈՒՐՈՎ ՊԱՎԵԼ
6. ՑԻԿԻՆԱ ՎԱԼԵՆՏԻՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼՈՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovovillage@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 34

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <Իրավական ակտերի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

Ֆիոլետովո համայնիքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապպետության Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղական համայնքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարատության նախարարություն պետական իրավվական փորձաքննության անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԶԱԴՈՐԿԻՆ ՎԱԼԵՐԻ
2. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՏԱՏՅԱՆԱ
3. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՕԼԳԱ
4. ՆՈՎԻԿՈՎ ՎԱԼԵՐԻ
5. ՍԱՄՈՂՈՒՐՈՎ ՊԱՎԵԼ
6. ՑԻԿԻՆԱ ՎԱԼԵՆՏԻՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ֆիոլետովո գյուղական համայնքի ավագանու
2014 թ. Դեկտեմբերի 9-ի թիվ 34 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 3000 (երեք հազար) դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000(հինգ հազար) դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 (տասը հազար)դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20 000(քսան հազար) դրամ.

3001-ից և ավելիու քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 (հիսուն հազար)դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

2000(երկու հազար) դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

3000 (երեք հազար)դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000(երեք հազար) դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝3000(երեք հազար) դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000(երեք հազար) դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000(երեք հազար) դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 0 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150 000(հարյուր հիսուն հազար) դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝30 000 (երեսուն հազար)դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 (մեկ հազար)դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500(հինգ հարյուր) դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000(քսանհինգ հազար)դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000(հիսուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝250 000(երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 650 000(վեց հարյուր հիսուն հազար) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000(երեք հարյուր հազար) դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000(մեկ հարյուր հազար)դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար)դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝1000(մեկ հազար) դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝2000(երկու հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50 000 (հիսուն հազար)դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝0 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000(հինգ հազար) դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝5000(հինգ հազար) դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝3000 (երեք հազար)դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Նովիկով

09 դեկտեմբերի 2014թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼՈՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovovillage@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 35

### ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, "Իրավական ակտերի մասին"ՀՀ օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով

Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2014թվականի 30 հունիսի "Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը և աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 08 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԶԱԴՈՐԿԻՆ ՎԱԼԵՐԻ
2. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՏԱՏՅԱՆԱ
3. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՕԼԳԱ
4. ՆՈՎԻԿՈՎ ՎԱԼԵՐԻ
5. ՍԱՄՈՂՈՒՐՈՎ ՊԱՎԵԼ
6. ՑԻԿԻՆԱ ՎԱԼԵՆՏԻՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

Հավելված
Ֆիոլետովո համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 35-Ա որոշման

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 8 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | *1* | *245000* |
| Ղեկավարի տեղակալ | *1* | *195000* |
| Աշխատակազմի քարտուղար | *1* | *193000* |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | *1* | *177000* |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ ֆինանսիստ | *1* | *177000* |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | *2* | *156000* |
| *Տեխսպասարկման անձնակազմ* | | |
| Տեխնիկական աշխատող | *1* | *66200* |

Ֆիոլետովո համայնքի ղեկավար Ա.Նովիկով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼՈՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovovillage@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 36-Ն

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, "Բյուջետային համակարգի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով՝ **Ֆիոլետովո համայնքի ավագանին *որոշում է***

Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2015թ. բյուջեն:

1. Եկամուտների գծով

**Ընդամենը** - քսանութ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար դրամ
այդ թվում՝
վարչական բյուջեի մասով- քսանութ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար դրամ
Ֆոնդային բյուջեի մասով- զրո դրամ

2. Ծախսերի գծով

**Ընդամենը** - քսանութ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար դրամ
այդ թվում՝
վարչական բյուջեի մասով- քսանութ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար դրամ
Ֆոնդային բյուջեի մասով- զրո դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԶԱԴՈՐԿԻՆ ՎԱԼԵՐԻ
2. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՏԱՏՅԱՆԱ
3. ԶԱԴՈՐԿԻՆԱ ՕԼԳԱ
4. ՆՈՎԻԿՈՎ ՎԱԼԵՐԻ
5. ՍԱՄՈԴՈՒՐՈՎ ՊԱՎԵԼ
6. ՑԻԿԻՆԱ ՎԱԼԵՆՏԻՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**